ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արձանագրություն 1

2018թ. փետրվարի 17-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 24-ը

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկուցող՝ ԲՖ դեկան Թ.Ասոյան)

2. ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկուցող՝ ԲՆՖ դեկան Մ.Ավագյան)

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումը ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում աշխատանքներն ընթացել են տարեկան զարգացման հայեցակարգին համապատասխան: Բանասիրական ֆակուլտետ հաշվետու ուստարում ընդունվել են ընդհանուր առմամբ 24 ուսանող, ընդ որում ռուսաց լեզվի և

գրականության կուրս չի ձևավորվել:Ներկայացվեց առաջադիմությունն ըստ կուրսերի, ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է մոտ 83 տոկոս:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ մասնագրերին, ուսպլաններին և առարկայական ծրագրերին: Փոփոխվել ու թարմացվել են ուսպլաններն ու առարկայական ծրագրերը, մասնագրերում նոր ձևաչափով են ներկայացվում կրթական ծրագրերի նպատակները, ելքային վերջնարդյունքները:

Ամբիոնները համալրված են որակյալ պրոֆեսորադասախոսական կազմերով, որոնք մասնակցում են միջազգային ծրագրերի, գիտաժողովների, վերապատրաստումների, իրենք են անցկացնում վերապատրաստումներ:

Աշխատանքներ են տարվել ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: 1-ին կիսամյակի համար կազմվել է միջոցառումների ծրագիր, որն իրականացվել է ուսանողների ուժերով: Ուսանողները մասնակցել են ԵՊՀ-ում և Վանաձորի և Գորիսի համալսարաններում անցկացված ուսանողական հանրապետական գիտաժողովների, արժանացել հավաստագրերի:

Դասավանդման գործընթացը ընթացել է ուսուցման նոր մեթոդների կիրառմամբ, կազմակերպվել են գրքերի քննարկումներ, կատարվել են դասալսումներ, անցկացվել են բաց դասեր:

Զեկուցման ընթացքում Թ.Ասոյանը ներկայացրեց համապատասխան դիտարկումներ և վերլուծություններ, իսկ այնուհետև՝ 2-րդ կիսամյակում նախատեսված անելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Թ.Ասոյանի հաշվետվությունը՝ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի զեկուցումը ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի գործունեությունը կազմակերպվել և անցկացվել է զարգացման տարեկան հայեցակարգի դրույթների իրագործման միտումով: Ֆակուլտետի ամբիոններում աշխատանքներն ընթացել են ուսուցման նոր ձևերի ու

մեթոդների ներդրման, դասընթացները մասնագիտական բարձր մակարդակով մատուցելու, բացթողումները հաղթահարելու ուղիով՝ հաշվի առնելով դասավանդման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ընդունելությանը, 1-ին կիսամյակում ֆակուլտետի ուսումնական առաջադիմությանն ըստ բաժինների և կուրսերի: Ուսումնական տարվա սկզբին մասնագիտական կրթական ծրագրերը և ուսպլանները համապատասխանեցվել են գործող չափորոշիչներին: Լրամշակվել և նորացվել են մասնագրերը, թարմացվել են ուսպլանները: Կազմվել է միջոցառումների ծրագիր, ըստ որի անցկացվել են գիտաժողովներ, քննարկումներ, կարդացվել են զեկուցումներ, տոնական հանդեսներ: Կատարվել է ինքնավերլուծություն:

Մ.Ավագյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում: ուշադրություն է դարձվելու վրիպումներին և բացթողումներին, իրականացվելու են հայեցակարգով նախատեսված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Մ.Ավագյանի հաշվետվությունը՝ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների դեկանների թափուր պաշտոնների համար մրցույթ հայտարարելու մասին հարցը: Հարցը ներկայացրեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ լրացել է դեկաններ Մ.Ավագյանի, Ս.Ամիրխանյանի, Հ.Ղաջոյանի պաշտոնավարման ժամկետը, ուստի ԳՊՀ՝ դեկանի ընտրության կանոնակարգի համաձայն պետք է հայտարարել մրցույթ բնագիտական, տնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների դեկանների թափուր պաշտոնների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հիմք ընդունելով դեկանի ընտրության ԳՊՀ կանոնակարգը՝

1.Հայտարարել մրցույթ բնագիտական ֆակուլտետի դեկանի թափուր տեղի համար:

2.Հայտարարել մրցույթ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի թափուր տեղի համար:

3.Հայտարարել մրցույթ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի թափուր տեղի համար:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 2

2018թ. մարտի 31-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 24-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկուցող՝ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան)

2. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկուցող՝ ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան)

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի հաշվետվությունը ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության վերաբերյալ: Զեկուցման սկզբում ներկայացվեցին ուսանողական համակազմը և ընդունելությունը: Նշվեց, որ ընդունելության ցուցանիշները բավարար համարել չի կարելի: Այդ ուղղությամբ պետք է ակտիվացնել աշխատանքները դպրոցների հետ: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ուսանողների շարժը: Առաջադիմությունը ներկայացնելիս նշվեց, որ բակալավրիատում անցած ուստարվա նույն ժամանակաշրջանի համեմատ բարձր է՝ 86%, որը ավելի է ստանձնած 75-80%-ի համեմատ:

Մագիստրատուրայում առաջադիմությունը ցածր է՝ 66%, որի հետևանքով ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 81%: Այս հարցի հետ կապված՝ ներկայացվեցին գնահատականներն ըստ գնահատման սանդղակի:

Հ.Ղաջոյանը հանգամանորեն անդրադարձավ ուսման վարձերին, անվճար տեղերին և ուսանողների՝ հիմնադրամներից օգտվելու, պրոֆեսորադասախոսական կազմին վերաբերող հարցերին: Աշխատանքներ են տարվել էլեկտրոնային տիրույթները դասախոսություններով համալրելու ուղղությամբ: Թերությունները հասկանալու և գնահատելու համար համագործակցել են որակի ապահովման բաժնի հետ՝ վերջինիս տրամադրած հարցումերի արդյունքները քննարկելու համար: Զեկուցման վերջում անդրադարձ կատարվեց կարգապահական հարցերին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Հ.Ղաջոյանի հաշվետվությունը՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանի հաշվետվությունը ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեության վերաբերյալ: Նա նշեց, որ տնտեսագիտական ֆակուլտետում ևս ընդունելության հետ կապված խնդիրներ կան, որոնց կարգավորումը մեծ մասամբ կապված է դպրոցների հետ համագործակցության ցածր մակարդակի հետ: Դեպի դպրոցներ այցելությունները պետք է լինեն նպատակային և կրեն պարբերական բնույթ՝ օգտագործելով և՛ ուսանողական, և՛ դասախոսական ներուժը: Անդրադառնալով կրթական ծրագրերին՝ Ս.Ամիրխանյանն ասաց, որ դրանք հաջողությամբ իրագործվում են՝ ուսուցման գործընթացում կիրառելով արդիական մեթոդներ, որոնցից օգտվում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը: Ֆակուլտետում մեծ ուշադրություն է դարձվում ուսուցման որակի բարձրացմանը: Համագործակցելով որակի ապահովման բաժնի հետ՝ անցկացվում են հարցախույզներ, որոնք ուսումնասիրվում և վերլուծվում են, արվում են համապատասխան հետևություններ: Ուսանողների հետ տարվող աշխատանքները բազմազան են, որոնց մի մասն են կազմում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումները:

Եզրափակելիս զեկուցողն ասաց, որ ֆակուլտետում ամեն ինչ արվում է ուսուցման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Ս.Ամիրխանյանի հաշվետվությունը՝ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ընթացիկ հարցերի մասին: Նա ներկայացրեց «Կանոնակարգ ԳՊՀ հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման և հասարակության հետ տարվող

աշխատանքների (փոփոխություններով)» փաստաթուղթը, որը նախօրոք դրվել էր քննարկման:

Մյուս հարցը վերաբերում էր ՏՖ կառավարման և ֆինանսների ամբիոնի ասպիրանտ Ա.Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի ընտրությանը և գիտական ղեկավարի նշանակմանը:

Արտահայտվեցին Ա.Հակոբյանը, Հ. Զաքոյանը, Ս.Ամիրխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել «Կանոնակարգ ԳՊՀ հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման, դրանց մասին իրազեկման և հասարակության հետ տարվող աշխատանքների (փոփոխություններով)» փաստաթուղթը:

2.Հավանություն տալ «Գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեկնածուական ատենախոսության թեմային:

3.Արմեն Աշմատի Հակոբյանին առաջադրել «Գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսության գիտական ղեկավար:

4. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի վերաբերյալ ԳՊՀ գիտխորհրդի որոշումները ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 3

2018թ. ապրիլի 14-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

(զեկուցող՝ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյան)

2. ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության հաշվետվությունը:

(զեկուցող՝ամբիոնի վարիչ Հ. Զաքոյան)

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- Հ.Ղուլոյանի հաշվետվությունը ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին: Զեկուցողը նախ ներկայացրեց տվյալներ ուսանողական համակազմի վերաբերյալ, ապա հանգամանորեն անդրադարձավ կրթական ծրագրերին: Նշվեց, որ կառավարության կողմից ընդունվում են նոր օրենսդրական ակտեր, նոր հարկային օրենսգիրք, որոնք պահանջում են անհրաժեշտ փոփոխություններ կատարել ծրագրերում: Քննարկվել է նոր ընդունված օրենսգիրքը: Ուսպլաններում համապատասխանեցվել են ամբիոնների առարկայացանկերը: Ավելացվել են նոր դասընթացներ, որոնք ներկայացվեցին ըստ կուրսերի: Հաշվապահական ծրագրերը յուրացնելու համար օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնելու նպատակով հաշվի են առնվել և վերլուծվել են արտաքին շահառուների, գործատուների, ուսանողների կարծիքներն ու առաջարկությունները:

Աշխատանքները մասնագրերի վրա գրեթե ավարտված են, կատարվում են խմբագրական բնույթի շտկումներ: Դրանց համապատասխան թարմացվում և լրացվում են դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները:

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն աշխատում է նվիրումով, դասավանդման ընթացքում կիրառում է տարբեր մեթոդներ՝ կապված առարկայի բնույթի հետ: Ուշադրություն է դարձվում դասալսումներին ու դրանց քննարկմանը: Ամբիոնների աշխատակիցները տպագրում են հոդվածներ, ձեռնարկներ, նրանց համահեղինակությամբ հոդվածներ են գրում նաև ուսանողները, որոնք զեկուցումներով հանդես են գալիս հանրապետական ուսանողական գիտաժողովներում:

Զեկուցողը կարևորեց դպրոցների հետ համագործակցությունը, նշեց, որ այդ ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է ակտիվացնել:

Զեկուցման վերջում նշվեց, որ աշխատանքներ շատ են կատարվում, սակայն դրանց փաստաթղթավորումը մնում է թերի:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հ.Ղուլոյանի հաշվետվությունը ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.-Հ.Զաքոյանի հաշվետվությունը ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին: Նա նշեց, որ Հ.Ղուլոյանի նշած խնդիրները կան նաև իրենց ամբիոնում: Աշխատաշուկայում կատարվող տեղաշարժերը անմիջականորեն ազդում են իրենց աշխատանքի վրա նոր մոտեցումներ մշակելու և ուսուցման գործընթացում ներդնելու առումով: Դա նշանակում է անմիջապես արձագանքել աշխատաշուկայի պահանջներին:

Ուսանողների առաջադիմությունը ներկայացնելիս նշվեց, որ վերջին կուրսերում նկատվում է առաջադիմության անկում: Այնուամենայնիվ, կան ուսանողներ, որոնց հետ կարելի է նույնիսկ հեռավար ուսուցում իրականացնել: Առաջադիմությունը բարձր է 1-ին կուրսերում: Մագիստրատուրայում դասերն անցնում են համեմատաբար աշխույժ մթնոլորտում, անցկացվում են արդիական խնդիրների շուրջ քննարկումների մեթոդով:

Ուշադրություն դարձվեց անհատական աշխատանքներին, նշվեց, որ դրանք հաճախ նպատակամետ չեն: Պետք է հանձնարարել այնպիսի թեմաներ, որոնց կատարման ընթացքում երևա ուսանողի ինքնուրույնությունը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով զեկուցողն առաջարկեց ուշադրություն դարձնել անհատական աշխատանքների կատարման որակին և ուսանողներին տրամադրել հոդվածներ գրելուն, որտեղ կբացահայտվեն նրանց գիտելիքների մակարդակը, ինքնուրույնությունը, վերլուծություններ կատարելու ունակությունները:

Հ.Զաքոյանն անդրադարձավ նաև ասպիրանտուրային՝ նշելով, որ դասերն ընթանում են ըստ ծրագրի:

Ամբիոնում եղած խնդիրները հիմնականում կապված են մասնագրերի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հ.Զաքոյանի հաշվետվությունը ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գործունեության մասին ընդունել ի գիտություն և ամբիոնի աշխատանքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանի «19-րդ դարի հայ գրականության պատմություն» դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը: Այն ներկայացրեց ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Արտահայտվեցին Թ.Ասոյանը, Ա.Առաքելյանը: Առաջարկվեց դասգիրքը երաշխավորել տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վաչագան Գրիգորյանի «19-րդ դարի հայ գրականության պատմություն» դասագիրքը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 4

2018թ. ապրիլի 29-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկանի ընտրություն:
2.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի ընտրություն:
3.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի ընտրություն:
4.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ասաց, որ լրացել էր ԳՊՀ բնագիտական, հումանիտար մասնագիտությունների և տնտեսագիտական ֆակուլտետների դեկանների պաշտոնավարման ժամկետները, առաջացած թափուր տեղերի համար ընդունված կարգով հայտարարվել է մրցույթ: Պատրաստվել են հավակնորդների փաստաթղթերի փաթեթները: Նշվեց, որ այդ թափուր տեղերի համար դիմել են Մ.Ավագյանը (բնագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածու), Հ.Ղաջոյանը (հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածու), Ս.Ամիրխանյանը (տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածու): Առաջարկվեց սկզբում լսել թեկնածուների ծրագրային ելույթները ֆակուլտետների հնգամյա (2018-2023 թթ.) զարգացման վերաբերյալ, իսկ այնուհետև ընդունված կարգով անցկացնել ընտրություն: Առաջարկն ընդունվեց գիտխորհրդի կողմից:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Ավագյանի զեկուցումը ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրի վերաբերյալ: Նա նշեց, որ բնագիտական ֆակուլտետի զարգացման նպատակն է եղել բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի որակյալ իրականացումը, մրցունակ մասնագետների պատրաստումը, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, դաստիարակչական, համագործակցային աշխատանքների արդյունավետ կազմակերպումը: Հիմք ունենալով ձեռքբերումները, քննադատաբար վերաբերվելով բացթողումներին և հաշվի առնելով զարգացման միտումները՝ բնագիտական ֆակուլտետի զարգացման հնգամյա ծրագրում արտացոլվել են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացման ոլորտներն ու

ուղիները: Անդրադառնալով ծրագրի դրույթներին՝ զեկուցողը նշեց, որ կարևորվում է աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման հանգամանքը:

Անցկացվեց Մ.Ավագյանի թեկնածության քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- պրոռեկտոր Ն.Կուտուզյանը, դասախոս Լ.Շեկյանը, որոնք դրական գնահատեցին Մ.Ավագյանի գործունեությունը ԳՊՀ-ում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Հ.Ղաջոյանի զեկուցումը ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրի վերաբերյալ: Զեկուցման սկզբում ներկայացվեցին ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական միջավայրի արդիականացման, ուսման արդյունավետության և որակի բարելավման ուղղություններով տարբվող աշխատանքներին: Նշվեց, որ առաջիկա 5 տարիների ընթացքում ծավալուն աշխատանքներ պետք է իրականացնել մարզի աշխատաշուկայի ուսումնասիրման, նոր ՄԿԾ-ների ներդրման, հանրակրթության միջավայրում կապերի ամրապնդման, առաջադիմությունը 75-80 %-ի սահմաններում պահելու, 100 %-անոց առաջադիմություն ունեցող խմբերի քանակն ավելացնելու, ուսուցման գործընթացի ներբուհական աշխատառող աշխատանքներիննքների լավ կազմակերպման առումներով: Ուշադրության կենտրոնում պետք է լինի ֆակուլտետի ամբիոնների գիտահետազոտական գործունեության համակարգումը: Դրա համար նախ պետք է հստակեցնել ամբիոնների գիտական հետազոտությունների ուղղվածությունը և ապա գիտական ներուժն ուղղորդել կոնկրետ խնդիրների լուծմանը: Այդ գործընթացում իրենց մասնակցությունը պետք է ունենան ուսանողները: Զարգացման հայեցակարգում մեծ տեղ էր տրված ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողների և ուսանողական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությանը: Զարգացման հայեցակարգում աշխատանքներ են նախատեսվել նաև արտաքին կապերի և համագործակցության ուղղությամբ: Մասնավորապես անհրաժեշտություն է համագործակցությունը նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող հանրապետության մյուս բուհերի հետ, մասնակցությունը միջազգային ծրագրերին, գիտաժողովներին:

Թեկնածուի ելույթից հետո ծավալվեց քննարկում: ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ պատմության և հասարակական գիտությունների ամբիոնների վարիչներ Հ.Հարությունյանը, Լ.Քուրքչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի ժ/պ Ս.Ամիրխանյանի զեկուցումը ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրի վերաբերյալ: Նա

նշեց, որ ժամանակակից արագընթաց զարգացումները մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում առաջադրում են նորանոր խնդիրներ, որոնց լուծումը պայմանավորված է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ որակյալ կանխատեսական ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ: Գավառի պետական համալսարանն իր գործունեությունը միշտ էլ կառուցել է ժամանակի գործընթացների և ապագայի տեսլականի հաշվառմամբ՝ ընդ որում նկատի ունենալով, որ համալսարանը լիարժեքորեն իրականացնում է իր՝ թե՛ հանրապետության և թե՛ մարզի կրթական կարիքները բավարարելու առաքելությունը: Համալսարանի ռազմավարական ծրագրերի իրականացման գործընթացում իր որոշակի դերակատարությունն ունի տնտեսագիտական ֆակուլտետը, որը՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում, իր հերթին մշակել և իրականացրել է բուհի ռազմավարական ծրագրից բխող և իր կրթական ուղղվածությանը համապատասխան ծրագրեր: Ֆակուլտետի 2018-2023թթ. զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել զարգացումները, ֆակուլտետում իրականացվող մշտադիտարկումների արդյունքներն ու վերլուծությունները, անցյալի փորձը՝ նպատակ ունենալով 1.իրականացնել աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան վերջնարդյունքահեն մասնագիտական եռաստիճան կրթական ծրագրեր,2.ապահովել գիտահետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ միջավայր, ուսումնամեթոդական, գիտահետազոտական աշխատանքների համակարգված իրականացում, 3.ներդնել կրթական նոր տեխնոլոգիաներ, 4.կիրառել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ, 5.ընդլայնել ուսանողակենտրոն ուսուցման հնարավորությունները, 6.ձևավորել բազմակողմանի գիտելիքներով օժտված, որոշակի արժեհամակարգ ունեցող, բարձր բարոյականային հատկանիշներով և կազմակերպչական ունակություններով աչքի ընկնող, լեզուների տիրապետող ուսանողական համակազմ, 7.աշխատակազմը համալրել երիտասարդ և բանիմաց մասնագետներով, 8.ապահովել հակակոռուպցիոն և ակադեմիական ազնվության հայեցակարգին համապատասխան միջավայր, էթիկայի կանոնների պահպանումը և բարեվարքության կանոնների արմատավորումը ֆակուլտետում, 9.որակի մշակույթի արմատավորումը ֆակուլտետի գործունեության բոլոր ոլորտներում:

Այնուհետև Ս.Ամիրխանյանը ներկայացրեց ֆակուլտետի գործունեությունն ըստ առանձին ոլորտների:

Ելույթից հետո ծավալվեց թեկնածության քննարկում: ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ ամբիոնի վարիչներ Հ.Ղուլոյանը, Հր.Զաքոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրին:

Այնուհետև դեկանների ընտրություն կատարելու նպատակով կազմվեց հաշվիչ հանձնաժողով (նախագահ՝ Ա.Ապրոյան, անդամներ՝ Հ.Զաքոյան, Լ.Ղռեջյան), դեկանի պաշտոնի թեկնածուների անունները մտցվեցին քվեաթերթիկների մեջ, անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Ապրոյանը.

գիտխորհրդի ներկա անդամների քանակը՝ 21

քվեարկության մասնակիցների քանակը՝ 19

բաժանված քվեաթերթիկների քանակը՝ 19

քվեատուփում առկա քվեաթերթիկների քնակը՝ 19

քվեարկության արդյունքներն ըստ դեկանի թեկնածուների՝

Ավագյան Մարտին – կողմ՝ 18, դեմ՝ 1, անվավեր՝ 0

Ղաջոյան Համլետ - կողմ՝ 18, դեմ՝ 1, անվավեր՝ 0

Ամիրխանյան Սամվել - կողմ՝ 18, դեմ՝ 1, անվավեր՝ 0

Հիմք ընդունելով ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, «Կանոնադրություն Գավառի պետական համալսարան» հիմնադրամի «Ընթացակարգ Գավառի պետական համալսարանի դեկանների ընտրության» իրավական փաստաթղթերը և քվեարկության արդյունքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հաստատել բնագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար Մ.Ավագյանի ընտրության արդյունքները:

2.Հաստատել հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար Հ.Ղաջոյանի ընտրության արդյունքները:

3.Հաստատել տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար Ս.Ամիրխանյանի ընտրության արդյունքները:

4.ԳՊՀ գիտխորհրդի որոշումը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին՝ հաստատման:

ԼՍԵՑԻՆ.- Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու հարցը: Հարցը ներկայացրեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ լրացել է պատմության ամբիոնի վարիչ Հ.Հարությունյանի պաշտոնավարման ժամկետը, ուստի ընդունված կարգի համաձայն՝ պետք է հայտարարել մրցույթ՝ պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար:

Հիմք ընդունելով ամբիոնի վարիչի ընտրության ԳՊՀ կանոնակարգը՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հայտարարել մրցույթ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 5

2018թ. մայիսի 26-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 24-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվության, ինքնավերլուծության արդյունքների և աշխատանքի հետագա ուղղությունների ներկայացում:

/զեկ՝. Ա.Ղարիբյան /

2.ԳՊՀ դասախոսների կողմից ակադեմիական շարժունության ծրագրերի իրականացման հաշվետվություն:

/զեկ՝. Հ.Հարությունյան, Սահակյան, Ս.Հայթյան/

3.ԳՊՀ 2017-2018 ուստարվա միջազգային ծրագրերի իրականացման հաշվետվություն և հետագա աշխատանքների ներկայացում:

/զեկ՝. Ա.Ապրոյան /

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ԱՔՎ պետ Ա.Ղարիբյանի հաշվետվությունը ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության 2017-2018 ուստարվա գործունեության, ինքնավերլուծության արդյունքների և աշխատանքի հետագա ուղղությունների մասին: Նախ ներկայացվեց վարչության գործունեության ընդհանուր նկարագիրը, այնուհետև կատարված աշխատանքները ներկայացվեցին վերլուծության ընդունված ձևաչափով: Հանգամանորեն նշվեցին իրականացրած աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, վտանգները և բարելավման ուղիները: Զեկուցողն անդրադարձավ գիտելիքահեն վերջնարդյունքներին, ԱՔՎ-ի համագործակցությամբ դասախոսների

վերապատրաստմանը, որի համար կազմվել է ծրագիր, որը պետք է իրականացնել ըստ ամբիոնների: Կարևորվեցին ամբիոններում սեմինարների անցկացումը, դասալսումները, որոնք պետք է քննարկել, ակտիվացնել՝ փորձի փոխանակման նպատակով, պետք է բացառել ձևական մոտեցումները: ԳՊՀ-ն մարզի միակ պետական բուհն է, սակայն մարզում թույլ կապեր ունի կրթական, սոցիալ-մշակութային, հասարակական հաստատությունների հետ: Ամուր կապեր հաստատելուն մեծ չափով խանգարում է հաղորդակցական ենթակառուցվածքների անկատար վիճակը: Բուհում պետք է մեծ ուշադրություն դարձնել գիտահետազոտական աշխատանքներին, ընդ որում գիտական ոլորտում պետք է ներառվի նաև տարածաշրջանը: Ջեկուցողն ուշադրություն հրավիրեց նաև բուհի միջազգային կապերի ուժեղացման վրա՝ նկատելով, որ դրա համար ԳՊՀ-ի մասին տեղեկատվությունը պետք է լինի համակարգված և լայնամասշտաբ: Այս տեսակետից կարևոր դեր կարող է խաղալ դասախոսների և ուսանողների մասնակցությունը շարժունության ծրագրերին: Դպրոցների հետ կապն ամրապնդելու համար անհրաժեշտ է կազմակերպել օլիմպիադաներ, մրցույթներ, փոխայցելություններ: Ա.Ղարիբյանն առաջարկեց ռեկտորատին կից շահակիցների խորհուրդ ստեղծել, կազմակերպել քննարկումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ա.Ղարիբյանի հաշվետվետվությունն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Հ.Հարությունյանի, Սահակյանի, Ս.Հայթյանի հաշվետվությունները ԳՊՀ դասախոսների կողմից ակադեմիական շարժունության ծրագրերի իրականացման մասին:

1.Հ.Հարությունյանն ասաց, որ եղել է Էսթենհազի Կարոլի համալսարանում, որն ունի ութ հազարից ավելի ուսանող և հիմնադրվել 1776 թ.: Նա ներկայացրեց համալսարանի ֆակուլտետները և մասնագիտությունները: Հանդիպել է համալսարանի ռեկտոր Զոլտանի և իր կոլեգաների հետ, խոսել կրթական հարցերի մասին, ծանոթացել կրթական և առարկայական ծրագրերին: Դասախոսություններ է կարդացել, որոնք նախատեսված են եղել միջազգային խմբի ուսանողների համար:

Նա ներկայացրեց կրթության կազմակերպման առանձնահատկությունները Կարոլի համալսարանում՝ նշելով, որ այդտեղ մեծ տեղ է տրվում գործնականին: Վերջում Հ.Հարությունյանը նշեց, որ աշխատանքներն ավելի արդյունավետ կարող են լինել, եթե ժամանակային սահմանափակությունը չլինի:

2.Սահակյանը շնորհակալություն հայտնեց ԳՊՀ-ին՝ Հունգարիայի համալսարաններում լինելու հնարավորություն տալու համար: Նա նշեց, որ հանդիպումներ է ունեցել ռեկտորի և ուսանողների հետ, ներկայացրել է Գավառի պետական համալսարանը, ուսումնասիրել է սոցիոլոգիային վերաբերող ծրագրերը: Առաջարկվել է կազմակերպել միջազգային կլոր սեղաններ, գիտաժողովներ, կազմակերպել ամառային հանդիպումներ, հոդվածներ

տպագրել: Ուսումնական գործընթացին վերաբերվում են պատասխանատվությամբ, սակայն ուսուցումը և քննություններն ընթանում են ազատ ռեժիմով: Դասախոսները զբաղվում են ինքնազարգացմամբ, նրանց որակավորումը բարձրացնելու նպատակով տրվում են առաջադրանքներ, որոնք անպայման կատարվում են: Հաշվետվության վերջում նշվեց, որ նման փոխայցելությունները հնարավորություն են տալիս եվրոպական համալսարանների փորձը իրացնել տեղերում՝ էականորեն բարձրացնելով ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

3.Ս.Հայթյանը ներկայացրեց իր գործունեությունը Պորտուգալիայի Բրագա քաղաքի համալսարանում: Նա նշեց, որ այնտեղ ինքը դասախոսել է: Ծրագիրը բաղկացած է եղել 2 մասից. 1-ին մասում նախատեսված է եղել լեզվական գիտելիքներ տալ և բարելավել խոսքային հմտությունները, 2-րդ մասում ներկայացրել է Ֆ.Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը: Անցկացվել են գերմաներենի օրեր: Ս.Հայթյանն ասաց, որ ուսանողությունը քիչ բան գիտեր Հայաստանի մասին, ուստի 2 ժամ տրամադրել է Հայաստանը և նրա մշակույթը ներկայացնելուն:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Հ.Հարությունյանի, Սահակյանի, Ս.Հայթյանի հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ա.Ապրոյանի հաշվետվությունը միջազգային համագործակցության ծրագրերի կատարման մասին: Նա նշեց, որ միջազգային համագործակցության շրջանակներում ակտիվ աշխատանքներ են տարվում տարբեր ծրագրերի մակարդակով: Իրականացվել են դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրեր, կնքվել են համագործակցության հուշագրեր: Ա.Ապրոյանը առանձին-առանձին անդրադարձավ միջազգային բոլոր այն ծրագրերին, որոնց մասնակցել են ԳՊՀ դասախոսներն ու ուսանողները:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ա.Ապրոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու հարցը: Հարցը ներկայացրեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ լրացել է «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյանի պաշտոնավարման ժամկետը, ուստի ընդունված կարգի համաձայն պետք է հայտարարել մրցույթ՝ «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար:

Հիմք ընդունելով ամբիոնի վարիչի ընտրության ԳՊՀ կանոնակարգը՝

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հայտարարել մրցույթ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 6

2018թ. հունիսի 9-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի ընտրություն:

2.ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2017-2018 ուստարվա գործունեության հաշվետվության և աշխատանքի հետագա ուղղությունների ներկայացում:
/զեկ՝. Ս.Խաչատրյան, Ն.Միրիբյան/

3.ԳՊՀ 2017-2018 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվության և հետագա անելիքների ներկայացում:
/զեկ՝. Ա.Ապրոյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.-Հ.Հարությունյանի ծրագրային ելույթը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի հնգամյա զարգացման /2018-2023թթ./ մասին: Ծրագիրը ներկայացնելուց առաջ նա ասաց, որ պատմագիտությունը՝ որպես հասարակական գիտակարգ, բոլոր ժամանակներում մարդկային հասարակության պատմությունն արժևորելու, հաճախ էլ վերաարժևորելու նպատակ է հետապնդում: Սակայն եթե համեմատաբար հեշտ է գնահատել հեռավոր անցյալի իրադարձությունները, ապա որոշակի դժվարություններ են առաջանում մոտիկ անցյալը, հատկապես ներկան գնահատելու առումով, որովհետև նախ ժամանակ է պետք իմաստավորելու անցյալը և ապա ազատվելու իշխող գաղափարախոսությունից: Այս տեսակետից չնայած դժվար է երկարաժամկետ ծրագիր կազմելը, այնուամենայնիվ, բուհական կրթությունը ենթադրում է պատմության համակարգված ուսուցում, ուստի ամբիոնի զարգացման հնգամյա ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ժամանակի առաջադրած պահանջները, պատմագիտության նվաճումները, բուհի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումները:

Այնուհետև Հ.Հարությունյանը ներկայացրեց ամբիոնի զարգացման հիմնական ուղղությունները, որոնք վերաբերում էին ուսուցման գործընթացին, ուսանողության հետ տարվող աշխատանքներին, պրոֆեսորադասախոսական կազմին, գիտահետազոտական

աշխատանքներին: Զեկուցողը հատկապես ուշադրություն դարձրեց ուսուցման մեթոդների կիրառման առանձնահատկություններին՝ փորձելով որոշարկել այս կամ այն մեթոդի արդյունավետության աստիճանը:
Ելույթից հետո տեղի ունեցավ թեկնածության քննարկում: ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյանը:

Այնուհետև ՀՄՖ պատմության ամբիոնի վարիչի ընտրություն անցկացնելու նպատակով կազմվեց հաշվիչ հանձնաժողով (նախագահ՝ Հ.Ղաջոյան, անդամներ՝ Ա.Ապրոյան, Ս.Ամիրխանյան), ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուի անունը մտցվեց քվեաթերթիկների մեջ, անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ.Ղաջոյանը.

գիտխորհրդի ներկա անդամների քանակը՝ 18
քվեարկության մասնակիցների քանակը՝ 18
բաժանված քվեաթերթիկների քանակը՝ 18
քվեատուփում առկա քվեաթերթիկների քնակը՝ 18
քվեարկության արդյունքները- կողմ՝ 18, դեմ՝ 0, անվավեր՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Հավանություն տալ ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի զարգացման հնգամյա ծրագրին:
2.Հաստատել հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում Հ.Հարությունյանի ընտրության արդյունքները:
3. ԳՊՀ գիտխորհրդի որոշումը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին:

ԼՍԵՑԻՆ.- Ս.Խաչատրյանի, Ն.Միրիբյանի հաշվետվությունը արտաքին կապերի և լրատվության բաժնի 2017-2018 ուստարվա գործունեության և աշխատանքի հետագա ուղղությունների մասին: Ներկայացվեցին արտաքին կապերի և լրատվության բաժնի աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանում: Կարևորվեցին հատկապես այն աշխատանքները, որոնք կապված են եղել ուսանողների կրթաթոշակների հետ: Բաժինը նաև ակտիվորեն զբաղվել է տարբեր միջոցառումների կազմակերպման հարցերով, ԳՊՀ կայքում տեղադրվել են իրազեկման հայտեր, համալսարանական կյանքին վերաբերող նորություններ և նյութեր: Բերվեցին կատարված աշխատանքներին առնչվող բազմաթիվ տվյալներ: Այնուհետև նրանք ներկայացրին հետագա աշխատանքների հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հիմք ընդունելով հաշվետվությունը՝ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2017-2018 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:
2.Հավանություն տալ ԱԿԼ բաժնի հետագա աշխատանքի ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ.-Ա.Ապրոյանի հաշվետվությունը ԳՊՀ 2017-2018 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեության և հետագա անելիքների մասին: Նա նշեց, որ

տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատանքը առօրեական է, ամեն օր երևում է նրանց աշխատանքը, սակայն մտահոգիչ է, որ քիչ ուսանողական կազմով մեծ շենքային պայմաններ են սպասարկվում: Մարդկային ռեսուրսների աշխատանքային գործունեությունը հավասարաչափ չէ, ուստի պետք է դրսևորվի նոր մոտեցում, որը կներկայացվի ռեկտորին և հոգաբարձուների խորհրդին: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ կատարված և կատարվելիք աշխատանքներին: Նշվեց, որ եղել են կարգապահական խախտումներ, որոնց համար արվել են նկատողություններ: Շատ աշխատանքներ են սպասվում. պետք է գործեն տուրիզմի և սմարթ կենտրոնները, իրականացնել տեխնիկայի համալրում, անհրաժեշտություն է ժամանակակից ընթերցասրահի և լինգաֆոնային կաբինետի ստեղծումը, լսարանների կահավորումը, լաբորատոր նյութերի ձեռքբերումը: Տարվա ընթացքում տնտեսական և գրենական պիտույքների պակաս չի զգացվել: Վերջում Ա.Ապրոյանը նշեց, որ ծրագրերը բազմաթիվ են, որոնց համար պետք է գտնել ֆինանսական միջոցներ, ներգրավել դոնորներ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ասաց, որ պետք է ներկայացնել առաջարկներ մասնաշենքերի օգտագործման վերաբերյալ: Պետք է նաև աշխատանքներ տանել դիմորդների շրջանում, ամրապնդել կապը դպրոցների, քոլեջների հետ, որովհետև տագնապալի իրավիճակ է ընդունելության առումով:

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հիմք ընդունելով հաշվետվությունը՝ ԳՊՀ 2017-2018 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեությունը գնահատել բավարար:

2.Հավանություն տալ հետագա անելիքների ծրագրին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի ելույթը ընթացիկ հարցերի շուրջ: Նա անդրադարձավ ԳՊՀ կայքում տեղադրված հարցաշարերին, որոնք հին են, պետք է դրանք փոխարինել նորերով, որը պիտի անի SS բաժինը: Տեղեկացրեց, որ մագիստրատուրայում կա 14 անվճար տեղեր, որոնք կբաշխվեն մրցույթից հետո: Ն.Կուտուզյանը կարևորեց մասնագրերի հետ տարվող աշխատանքները, առարկայական ծրագրերի վերանայումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Ն.Կուտուզյանի ելույթն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 7

2018թ. հունիսի 23-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչի ընտրություն:

2.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների ներկայացում:
(զեկ՝. ԲՖ դեկան Թ. Ասոյան)

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների ներկայացում:
(զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Ավագյան)

4.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների ներկայացում:
(զեկ՝. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան)

5.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների ներկայացում:
(զեկ՝. ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան)

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչի ընտրություն անցկացնելու հարցը: Ամբիոնի զարգացման հնգամյա ծրագիրը (2018-2023թ.թ.) ներկայացրեց «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Ղուլոյանը: Նա ներկայացրեց ամբիոնի զարգացման հիմնական ուղղությունները, ուսուցման գործընթաց, ուսանողության հետ տարվող աշխատանքներ, պրոֆեսորադասախոսական կազմ, գիտահետազոտական աշխատանքներ: Զեկուցողը հատկապես ուշադրություն դարձրեց ուսուցման մեթոդների կիրառման առանձնահատկություններին՝ փորձելով որոշարկել այս կամ այն մեթոդի արդյունավետության աստիճանը ըստ առանձին առարկաների: Ավելի համակարգային

բնույթ կկրեն տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների օգտագործումը, կակտիվացվեն աշխատանքները արտաքին շահառուների, դպրոցների, կազմակերպությունների հետ: Պետք է լիարժեքորեն իրականացնել նաև կատարված աշխատանքների փաստաթղթավորումը:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ ներկայացված ծրագրի և թեկնածության քննարկում: Արտահայտվեցին ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանը, ամբիոնի վարիչ Հր.Զաքոյանը:

Այնուհետև ՏՖ ամբիոնի վարիչի ընտրություն անցկացնելու նպատակով կազմվեց հաշվիչ հանձնաժողով (նախագահ՝ Մ.Ավագյան, անդամներ՝ Մ.Հերգնյան, Հր.Զաքոյան), ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուի անունը մտցվեց քվեաթերթիկների մեջ, անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Մ.Ավագյանը.

գիտխորհրդի ներկա անդամների քանակը՝ 21
քվեարկության մասնակիցների քանակը՝ 20
բաժանված քվեաթերթիկների քանակը՝ 20
քվեատուփում առկա քվեաթերթիկների քնակը՝ 20
քվեարկության արդյունքները- կողմ՝ 20, դեմ՝ 0, անվավեր՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Հավանություն տալ ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի զարգացման հնգամյա ծրագրին:

2.Հաստատել հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնում Հ.Հարությունյանի ընտրության արդյունքները:

3. ԳՊՀ գիտխորհրդի որոշումը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների մասին հարցը: Այն ներկայացրեց դեկան Թ. Ասոյանը: Նա նշեց, որ ուստարվա ընթացքում աշխատանքային հիմնական ծանրաբեռնվածությունը արտահայտվում է 2-րդ կիսամյակում, որը մեծ մասամբ պայմանավորված է ամփոփիչ ատեստավորման քննությունների պատշաճ կազմակերպման և անցկացման հանգամանքով: Քննսություններն անցկացնելու համար առկա են եղել բոլոր անհրաժեշտ ռեսուրսները. հարցաշարեր, հարցատոմսեր, արձանագրությունների մատյան և այլ փաստաթղթեր: Ատեստավորումն անցել է սահմանված կարգով: Զեկուցողն այնուհետև ներկայացրեց ատեստավորման արդյունքները, ուսանողների և հանձնաժողովների անդամների կարծիքները:

Արտահայտված տեսակետներն ու կարծիքները կքննարկվեն և ըստ անհրաժեշտության կներառվեն 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բանասիրական ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների մասին հարցը: Հարցը ներկայացրեց դեկան Մ.Ավագյանը: Նա մասնավորապես ասաց, որ ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 33 ուսանող, որոնցից 4-ը՝ վերականգնվածներ: Գնահատվել են 32-ը, 1-ը չի ներկայացել: Այնուհետև Մ.Ավագյանը տվյալներ ներկայացրեց ըստ բաժինների: Ամփոփիչ ատեստավորման քննությունների առարկայական հանձնաժողովների կողմից կատարվել են դիտարկումներ, որոնք վերաբերում են համակարգչային ծրագրերի մշակման, ինքնուրույն աշխատանքի ծավալի, գիտական վերջին տվյալների ներառման, ուսումնական պրակտիկաների հարցերին, միաժամանակ բարձր են գնահատվել որոշ աշխատանքներ: Մ.Ավագյանը հավաստիացրեց, որ արված դիտարկումները կքննարկվեն և կներառվեն հետագա ծրագրերում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների մասին հարցը: Զեկուցեց ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանը: Նա ասաց, որ ֆակուլտետը կրթական ծրագրեր է իրականացրել բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում երեք մասնագիտությունների գծով: Ֆակուլտետի գլխավոր նպատակն է եղել կրթության որակի բարելավումը և ուսման արդյունավետության բարձրացումը: Ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցել են բակալավրիատի և մագիստրատուրայի 69 ուսանող: Քննությունների արդյունքով առաջադիմությունը կազմել է 100 տոկոս: Առարկայական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում ներկայացվել են առաջարկություններ, որոնք քննարկվել են ֆակուլտետի խորհրդում, ամբիոններում և դասախոսների հետ և կարտահայտվեն զարգացման հայեցակարգում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների մասին հարցը: Զեկուցեց ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանը: Նա նշեց, որ ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են բակալավրիատի 48 և մագիստրատուրայի 14 ուսանողներ: Ներկայացվեցին ատեստավորման արդյունքներն ըստ բաժինների: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները ներկայացրել են կրթության որակը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ, որոնց իրականացման ուղղությամբ կկազմվի գործողությունների պլան, որը կիրագործվի ամբիոնների կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 8

2018թ. հուլիսի 13-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018 թ. ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների ներկայացում:

/զեկ՝. Ն.Կուտուզյան /

2.ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2017-2018 ուստարվա հաշվետվության և գործունեության հետագա ուղղությունների ներկայացում:

/զեկ՝. Ա.Մայիլյան/

3.ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2017-2018 ուստարվա հաշվետվության և գործունեության հետագա ուղղությունների ներկայացում:

/զեկ՝. Վ.Ավետիսյան/

4.Գավառի պետական համալսարանում 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերի քննարկում և հաստատում:

/Զեկուցողներ՝ մասնագիտական կրթական ծրագրերի ղեկավարներ/

5. Գավառի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարվա մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018 թ. ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների մասին: Նա նշեց, որ հաշվետվությունները կարևոր միջոց են ինչպես համալսարանական գործընթացները, այնպես էլ ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները գնահատելու համար: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ամփոփիչ քննությունների արդյունքներին՝ ներկայացնելով թվական տվյալներ շրջանավարտների քանակի, գնահատականների բաշխվածության վերաբերյալ ըստ բաժինների: Արդյունքները գոհացուցիչ են, անբավարար գնահատականներ չեն եղել, առաջադիմությունը կազմել է 100%:

Այնուհետև ներկայացվեցին առարկայական հանձնաժողովների նախագահների հաշվետվություն-կարծիքները, դիտողություններն ու առաջարկությունները: Դրանք բնորոշվեցին որպես միօրինակ, գրեթե ոչինչ չասող գրություններ: Դրա հետ կապված, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման գործընթացի բարելավման նպատակով արվեցին մի շարք առաջարկություններ. 1.մշակել նոր ձևաչափեր ավարտական աշխատանքների, թեզերի ղեկավարների և գրախոսների համար, ներկայացվեց նոր ձևաչափի օրինակ: Պետք է վերանայել նաև համապատասխան կանոնակարգը: 2.Մասնագրերում նկարագրել ավարտական աշխատանքների, թեզերի գնահատման չափանիշները, միավորների բաշխումը, հանձնաժողովների նախագահներին տրամադրել ՄԿԾ-ների մասնագրերը: 3.Քննության ընթացքում խուսափել շտապողականությունից, բացառել գրագողությունը, ծածկագրերից օգտվելը, ստեղծել տեսաձայնագրման հնարավորություններ: 4.Ուսանողների գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հնարավորություն ստեղծելու նպատակով ապահովել թեմաների շարունակականություն անհատական աշխատանքներից սկսած մինչև մագիստրոսական թեզեր: 5. Հանձնաժողովները կազմավորելիս առաջնորդվել մասնագիտական որակներով, փորձով, օբյեկտիվությամբ: 6. Ամբիոններում անցկացնել քննարկումներ առաջացած խնդիրների վերլուծության և գնահատման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ն.Կուտուզյանի զեկուցումը հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018 թ. ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների և հետագա անելիքների մասին ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ա. Մայիլյանի զեկուցումը ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2017-2018 ուստարվա հաշվետվության և գործունեության հետագա ուղղությունների մասին: Նա նշեց, որ մշակվել են հարցաթերթիկները, անցկացվել են հարցումներ, որոնք ենթարկվել են մշակման: Հարցումներն անցկացվել են բոլոր ֆակուլտետներում էլեկտրոնային

եղանակով, որին մասնակցել են տարբեր կուրսերի ուսանողներ: Ա. Մայիլյանը ներկայացրեց ստացված արդյունքները՝ նշելով, որ յուրաքանչյուր ֆակուլտետի կտրամադրվեն համապատասխան նյութերը:

Զեկուցման վերջում Ա.Մայիլյանը ներկայացրեց որակի ապահովման բաժնի զարգացման ուղղությունները, որոնք ներառում են հարցաթերթիկների մշակման, հարցախույզների անցկացման, արդյունքների ամփոփման և տրամադրման ու այլ կարգի աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Ա.Մայիլյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2017-2018 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- Վ.Ավետիսյանի զեկուցումը ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2017-2018 ուստարվա հաշվետվության և գործունեության հետագա ուղղությունների մասին: Զեկուցողն արժևորեց տեղեկատվական տեխնոլոգիաների դերը համալսարանական գործընթացներում: Սակայն դրանք անընդհատ նորացման, արդիականացման կարիք են զգում: ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը Մասնավորապես արդիականացվել են ԳՊՀ նոր կայքը և համակարգչային լսարանները, մշակվել են ֆակուլտետների, ամբիոնների, փաստաթղթերի, կենսագրությունների, ստորաբաժանումների էջերը: Իրականացվել են նաև կայքերի և համակարգերի, ցանցի և սերվերային կենտրոնի, տպիչների սպասարկում:

Վերջում Վ.Ավետիսյանը նշեց, որ զարգացման ուղղություններն են սպասարկման և արդիականացման աշխատանքները, ծառայությունների ընդլայնումը, անգլերեն և ռուսերեն էջերի պարբերական համալրումները, օֆիս 365 փաթեթի ծառայությունների ընդլայնումը: Աշխատանքներ կտարվեն նոր ծրագրերի ներդրման ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով Վ.Ավետիսյանի հաշվետվությունը՝ ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2017-2018 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանում 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերի մասին: Զեկուցողը նշեց, որ մասնագրերի լրամշակման ուղղությամբ ծավալուն աշխատանքներ են տարվել: Վերանայվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքները, ակնկալվող ընդհանրական, մասնագիտական և գործնական իրազեկությունները: Մասնագրերը մշակվել են նոր մեթոդաբանությամբ, դրանցում ամրագրվել են անհրաժեշտ սպառիչ տեղեկատվություն: Մասնագրերի մշակման ընթացքում համագործակցային աշխատանքներ են տարվել ամբիոնների և դեկանատների հետ: Մասնագրերի շուրջ ծավալվեց ակտիվ քննարկում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Գավառի պետական համալսարանում 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մասին: Զեկուցողը նշեց, որ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև ռացիոնալ ուսումնական պլանների առկայությամբ. դասընթացների ընտրությունը և դասաժամերի ճիշտ բաշխումը կարևոր նախապայման է կրթության արդյունավետության բարձրացման համար: Այնուհետև նա անդրադարձավ ուսումնական պլաններին ըստ ֆակուլտետների՝ նշելով, որ համատեղ արդյունավետ աշխատանքներ են կատարվել դեկանատների հետ:

Հարցի շուրջ ծավալվեց քննարկում: Արտահայտվեցին ֆակուլտետների դեկանները և փոխդեկանները: Առաջարկվեց հաստատել բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները 2019-2020 ուստարվա համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Գավառի պետական համալսարանի 2018-2019 ուսումնական տարում իրականացվելիք մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 9

2018թ. սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչի ընտրություն:

2.«ԳՊՀ-էլեկտրոնային համալսարան» հարթակի ձևավորման և համալրման աշխատանքների մասին:

(զեկ՝. SS բաժնի ծրագրավորող Մ.Հովհաննիսյան)

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչի ընտրության հարցը: Նշվեց, որ ընդունված կարգի համաձայն ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարվել է մրցույթ: Մրցույթին մասնակցելու համար դիմել է ԳՊՀ SS բաժնի վարիչ Վ.Ավետիսյանը: Նա ներկայացրեց ամբիոնի զարգացման հնգամյա (2018-2023թ.թ.) հայեցակարգը: Առաջիկա հինգ տարիներին ամբիոնի զարգացման հիմնական ուղղությունները.
1.Իրականացնել մասնագիտական կրթական ծրագրի բովանդակային և կառուցվածքային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:
2.Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:
3.Վերանայել մասնագիտական կրթական ծրագրում ոչ մասնագիտական կրթամասի դասընթացների առարկայացանկերը, կազմակերպել լրացական դասընթացներ:
4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը ուսումնական գործընթացում:

5. Ձևավորել և զարգացնել համագործակցության ցանց ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող ՏՏ ոլորտի կառույցների և ընկերությունների, դպրոցների, «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի հետ:

6. Ներգրավվել ուսանողներին ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի աշխատանքներում: Խրախուսել կամավորական աշխատանքը: Ընդլայնել արտադրական և ուսումնական պրակտիկաներ անցկացնող գործընկերների ցանկը:

7. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի հետ կապված անհրաժեշտ է ապահովել իրական նախագծերի հիման վրա ավարտական աշխատանքների կատարում՝ հաշվի առնելով ինչպես ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջնահերթությունները և պահանջները, այնպես էլ տեղական այլ կազմակերպությունների պահանջները: Կարևոր է նաև ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկել գործատու ոլորտի ներկայացուցիչների:

8. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական և մանկավարժական մակարդակի բարձրացում: Դասախոսական կազմի վերապատրաստումներին մասնակցություն:

9. Ամբիոնի ուսումնական ռեսուրսների համալրում և արդիականացում, այդ թվում՝ համալրում նոր մասնագիտական գրականությամբ և այլ օժանդակ նյութերով, դրանց տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:

10.Գիտահետազոտական աշխատանքների ուղղությունների վերանայում՝ ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու առումով: Իրականացնել հետազոտություններ արհեստական բանականության, նեյրոնային ցանցերի, մեծ տվյալների վերլուծության, անօդաչու թռչող սարքերի, կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության վերաբերյալ: Ուսանողների ակտիվ ներգրավում ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներում: Ստեղծել համագործակցության ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ:

11. Ներքին համագործակցության ընդլայնում ԳՊՀ-ի ղեկավարության, այլ ամբիոնների, դեկանատների, ուսումնական մասի և այլ ստորաբաժանումների հետ: Արտաքին կապերի առումով ամբիոնի կողմից համագործակցության հաստատում այլ բուհերի, ՏՏ ընկերությունների և այլ կազմակերպությունների հետ:

12. Ամբիոնի սպասարկած մասնագիտական կրթական ծրագրի հանրահռչակում Գեղարքունիքի մարզում, մասնագիտական առավելությունների և ընձեռած հնարավորությունների ներկայացում, դպրոցների ավարտական դասարանների աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման ծրագրերի իրականացում:

Զեկուցումից հետո տեղի ունեցավ ներկայացված ծրագրի և թեկնածության քննարկում: Արտահայտվեցին ԲՆՖ դեկան Մ.Ավագյանը, ամբիոնի վարիչ Ա.Սիմոնյանը:

Այնուհետև ՏՖ ամբիոնի վարիչի ընտրություն անցկացնելու նպատակով կազմվեց հաշվիչ հանձնաժողով (նախագահ՝ Մ.Ավագյան, անդամներ՝ Մ.Հերգնյան, Հր.Զաքոյան), ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուի անունը մտցվեց քվեաթերթիկների մեջ, անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Մ.Ավագյանը.

գիտխորհրդի ներկա անդամների քանակը՝ 22
քվեարկության մասնակիցների քանակը՝ 22
բաժանված քվեաթերթիկների քանակը՝ 22
քվեատուփում առկա քվեաթերթիկների քնակը՝ 22
քվեարկության արդյունքները- կողմ՝ 20, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Հիմք ընդունելով ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, «Կանոնադրություն Գավառի պետական համալսարան հիմնադրամի», «Ընթացակարգ Գավառի պետական համալսարանի ամբիոնների վարիչների ընտրության» իրավական փաստաթղթերը և քվեարկության արդյունքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1. Հավանություն տալ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի զարգացման հնգամյա ծրագրին:
2.Հաստատել բնագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնում Վ.Ավետիսյանի ընտրության արդյունքները:
3. ԳՊՀ գիտխորհրդի որոշումը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին:

ԼՍԵՑԻՆ.- «ԳՊՀ-էլեկտրոնային համալսարան» հարթակի ձևավորման և համալրման աշխատանքների մասին հարցը: Զեկուցումով հանդես եկավ ՏՏ բաժնի ծրագրավորող Մ.Հովհաննիսյանը: Նա ներկայացրեց, թե ինչ է իրենից ներկայացնում ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգը: ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման E-learning GSU համակարգը նախատեսված է էլեկտրոնային ուսուցման գործընթաց կազմակերպելու համար: Համակարգը հնարավորություն է տալիս համացանցային սահմանափակ տիրույթում մշակել ուսուցման փաթեթներ, որոնք ուսանողը կարող է օգտագործել ուսումնական գործընթացի շրջանակում: Զեկուցողը նշեց նաև, թե ինչ հնարավորություններ է տալիս համակարգը օգտվողներին: Դրանք են՝

1.Առցանց ռեժիմով համակարգի միջավայրում սահմանափակ իրավունքներով օգտվողի կողմից ուսուցման փաթեթի մշակում:
2.Համակարգից օգտվողների ցանկի, մուտքի հասանելիության (ադմինիստրատոր, դասախոս, ուսանող) մակարդակների սահմանում, օգտվողների վիրտուալ հաշիվ-տիրույթների ստեղծում:

3.Ռեալ ժամանակում Էլեկտրոնային ուսուցման փաթեթների մշտական համացանցային հասանելիության ապահովում՝ մուտքի իրավունքով օգտվողների սահմանված ցանկի համար:

4.Համակարգից օգտվողների (դասախոս, ուսանող, աշխատակից) ինֆորմացիոն մշակույթի ձևավորում, կատարելագործում, ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների տիրապետման մակարդակի բարձրացում, ավանդական գործառույթի արդյունավետության բարձրացում, ժամանակի խնայողություն:

Այնուհետև ներկայացվեց, թե ինչ միջավայրի վրա է աշխատում էլ.ուսուցման համակարգը, կատարվել են ուսումնասիրություններ, ցույց տրվեց դրական և բացասական կողմերը:

Զեկուցողն առաջարկեց կազմակերպել քննարկում առարկայական տիրույթների ստեղծման, առարկայական տիրույթի փաթեթի ձևաչափի մշակման, օգտատերերի գրանցման հնարավորությունների, տվյալների բազայի ակտուալության (տվյալների մաքրում),խորհրդատվությունների տրամադրման, դասախոսների վերապատրաստման և համակարգի բովանդակային մշտադիտարկման հարցերի շուրջ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ «ԳՊՀ-էլեկտրոնային համալսարան» հարթակի ձևավորման և համալրման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

ԼՍԵՑԻՆ.-«ԳՊՀ գործավարության կարգ (փոփոխություններով)» փաստաթուղթը հաստատելու մասին: Այն ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուզյանը և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել «ԳՊՀ գործավարության կարգ (փոփոխություններով)» փաստաթուղթը:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի ու հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի թափուր տեղերի համար մրցույթ հայտարարելու հարցը: Հարցը ներկայացրեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ լրանում է ԲՖ դեկան Թ.Ասոյանի և հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ.Գրիգորյանի պաշտոնավարման ժամկետները, ուստի ընդունված կարգի համաձայն՝ պետք է հայտարարել մրցույթ՝ բանասիրական ֆակուլտետի դեկանի և հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի թափուր տեղերի համար:

Հիմք ընդունելով դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների ԳՊՀ կանոնակարգերը՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հայտարարել մրցույթ բանասիրական ֆակուլտետի դեկանի թափուր տեղի համար:

2.Հայտարարել մրցույթ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար:

ԼՍԵՑԻՆ.-ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամներ ընտրելու հարցը: Հարցի վերաբերյալ արտահայտվեցին ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Հ.Ղաջոյանը, բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամներ ընտրել ներքոհիշյալ անձանց.

1.Գրիգորյան Վաչագան - ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

2.Կատվալյան Վիկտոր - ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,

3.Հակոբյան Հրանուշ – ԳՊՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

4.Հայթյան Սաթենիկ – ԳՊՀ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս,

5.Հայրապետյան Քանաքարա – ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս,

6. Հարությունյան Հարություն – ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 10

2018թ. հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկ՝. ԲՖ դեկան Թ.Ասոյան)

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկ՝. ԲՆՖ դեկան Մ.Ավագյան)

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների մասին: Զեկուցումով հանդես եկավ դեկան Թ. Ասոյանը: Նա նշեց, որ երկրորդ կիսամյակում աշխատանքային ծանրաբեռնվածությունը մեծանում է՝ կապված ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման հետ: Բոլոր դեպքերում նախատեսված գործընթացները բարեհաջող իրականացվել են: Զեկուցողը կարևորեց այն հանգամանքը, որ ատեստավորումն ընթացել է հաստատված ժամանակացույցին համապատասխան, առանց լարվածության և բողոքարկման դեպքերի: Ներկայացվեցին քննությունների, տարեկան մշտադիտարկման արդյունքները:

Թ.Ասոյանը ներկայացրեց բանասիրական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգը, որը մշակվել է ԳՊՀ 5-ամյա ռազմավարական ծրագրի դրույթների, բանասիրական գիտությունների, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ: Ըստ հայեցակարգի՝ որոշակի աշխատանքներ են տարվելու

մասնագրերի, կրթական և առարկայական ծրագրերի, դասավանդման, ուսուցման և ուսումնառության, վերլուծությունների և մշտադիտարկումների, ուսանողների և ուսանողական ինքնակառավարման մարմինների և այլ ուղղություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Թ.Ասոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների մասին: Ֆակուլտետի գործունեությունը ներկայացրեց դեկան Մ.Ավագյանը: Նա ասաց, որ բնագիտական ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հասնելու համար իրականացվել են տարբերակված դասավանդման մեթոդներ: Դրան էականորեն նպաստում են ֆակուլտետում գործող էլեկտրատեխնիայի և բնագիտության ուսումնական լաբորատորիաները, ընդ որում լաբորատոր- գործնական պարապմունքներին շատ հաճախ մասնակցում են դպրոցների աշակերտներ: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ամփոփիչ ատեստավորման քննություններին: Ներկայացվեցին ուսանողների մասնակցության և քննության արդյունքների տվյալները:

Ներկայացնելով 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգը՝ Մ.Ավագյանն ասաց, որ բնագիտական ֆակուլտետում իրականացվելիք գործողությունները համահունչ են «Նոր մտածողություն, նոր տեսլական» կարգախոսին:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Մ.Ավագյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 11

2018թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 20-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի ընտրություն:

2. ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ընտրություն:

3.Ընթացիկ հարցեր:

Նիստը բացեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա ասաց, որ լրացել էր ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի ու հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնավարման ժամկետները, առաջացած թափուր տեղերի համար ընդունված կարգով հայտարարվել է մրցույթ: Պատրաստվել են հավակնորդների փաստաթղթերի փաթեթները: Նշվեց, որ այդ թափուր տեղերի համար դիմել են Թ.Ասոյանը (բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածու) և Վ.Գրիգորյանը (հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածու): Առաջարկվեց սկզբում լսել թեկնածուների ծրագրային ելույթները բանասիրական ֆակուլտետի և հայոց լեզվի և գրականության ամբիոնի հնգամյա (2018-2023 թթ.) զարգացման վերաբերյալ, իսկ այնուհետև ընդունված կարգով անցկացնել ընտրություն: Առաջարկն ընդունվեց գիտխորհրդի կողմից:

ԼՍԵՑԻՆ.- ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի ժ/պ Թ.Ասոյանի զեկուցումը ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրի վերաբերյալ: Նա նշեց, որ ժամանակակից արագընթաց զարգացումները մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում առաջադրում են նորանոր խնդիրներ հատկապես հասարակագիտական ուղղվածությամբ բնագավառներում, որոնց լուծումը պայմանավորված է կանխատեսելի ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ: Բանասիրական ֆակուլտետը իր

գործունեությունը միշտ էլ կառուցել է ժամանակի գործընթացների և ապագայի տեսլականի հաշվառմամբ՝ ընդ որում նկատի ունենալով, որ համալսարանը լիարժեքորեն իրականացնում է իր՝ թե՛ հանրապետության և թե՛ մարզի կրթական կարիքները բավարարելու առաքելությունը: Համալսարանի ռազմավարական ծրագրերի իրականացման գործընթացում իր որոշակի դերակատարությունն ունի նաև բանասիրական ֆակուլտետը, որը՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում, իր հերթին մշակել և իրականացրել է բուհի ռազմավարական ծրագրից բխող և իր կրթական ուղղվածությանը համապատասխան ծրագրեր: Ֆակուլտետի 2018-2023թթ. զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել զարգացումները, ֆակուլտետում իրականացվող հարցումների, մշտադիտարկումների արդյունքներն ու վերլուծությունները, անցյալի փորձը՝ նպատակ ունենալով իրականացնել աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրեր, կիրառել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ, ընդլայնել ուսանողակենտրոն ուսուցման հնարավորությունները, ձևավորել բազմակողմանի գիտելիքներով օժտված, որոշակի արժեհամակարգ ունեցող, բարձր բարոյականային հատկանիշներով և կազմակերպչական ունակություններով աչքի ընկնող, լեզուների տիրապետող ուսանողական համակազմ, ապահովել հակակոռուպցիոն և ակադեմիական ազնվության հայեցակարգին համապատասխան միջավայր, էթիկայի կանոնների պահպանումը և բարեվարքության կանոնների արմատավորումը ֆակուլտետում:

Այնուհետև Թ.Ասոյանը ներկայացրեց բանասիրական ֆակուլտետի գործունեությունն ըստ առանձին ոլորտների:

Ելույթից հետո ծավալվեց թեկնածության քննարկում:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ Գ.Միրիբյանը, Հ.Ղաջոյանը, Ս.Ամիրխանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-Հավանություն տալ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրին:

ԼՍԵՑԻՆ.- Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժ/պ Վ.Գրիգորյանի ծրագրային ելույթը ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի հնգամյա զարգացման /2018-2023թթ./ մասին: Նա ասաց, որ և՛ հայոց լեզուն, և՛ գրականությունը՝ որպես հասարակագիտական գիտակարգեր, բոլոր ժամանակներում հարցադրումներն ու խնդիրները արժևորելու, հաճախ էլ վերաարժևորելու նպատակ են հետապնդում: Բոլոր դեպքերում պետք է իրականացնել համակարգված ուսուցում, ուստի ամբիոնի զարգացման հնգամյա ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ժամանակի առաջադրած պահանջները, հայերենագիտության նվաճումները, բուհի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումները:

Այնուհետև Վ.Գրիգորյանը ներկայացրեց ամբիոնի զարգացման հիմնական ուղղությունները, որոնք վերաբերում էին ուսուցման գործընթացին, ուսանողության հետ տարվող աշխատանքներին, պրոֆեսորադասախոսական կազմին, գիտահետազոտական աշխատանքներին: Զեկուցողը հատկապես ուշադրություն դարձրեց ուսուցման մեթոդների կիրառման առանձնահատկություններին:

Ելույթից հետո տեղի ունեցավ թեկնածության քննարկում:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ ԲՖ դեկանի ժ/պ Թ. Ասոյանը, օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ.Միրիբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի զարգացման հնգամյա (2018-2023թթ.) ծրագրին:

Այնուհետև ընտրություն կատարելու նպատակով կազմվեց հաշվիչ հանձնաժողով (նախագահ՝ Ա.Ապրոյան, անդամներ՝ Մ.Գարեյան, Թ. Խաչիկյան), թեկնածուների անունները մտցվեցին քվեաթերթիկների մեջ, անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն, որի արդյունքները ներկայացրեց հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Ապրոյանը.

գիտխորհրդի ներկա անդամների քանակը՝ 20

քվեարկության մասնակիցների քանակը՝ 20

բաժանված քվեաթերթիկների քանակը՝ 20

քվեատուփում առկա քվեաթերթիկների քնակը՝ 20

Քվեարկության արդյունքներն ըստ թեկնածուների՝

Ասոյան Թաթուլ – կողմ՝ 20, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Գրիգորյան Վաչագան - կողմ՝ 20, դեմ՝ 0, անվավեր՝ 0

Հիմք ընդունելով ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, «Կանոնադրություն Գավառի պետական համալսարան հիմնադրամի» և »Ընթացակարգ Գավառի պետական համալսարանի դեկանների ընտրության», ամբիոնների վարիչների ընտրության իրավական փաստաթղթերը, քվեարկության արդյունքները՝

ՈՐՈՇԵՑԻՆ.-1.Հաստատել բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար Թ.Ասոյանի ընտրության արդյունքները:

2.Հաստատել բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնի համար Վ.Գրիգորյանի ընտրության արդյունքները:

3. ԳՊՀ գիտխորհրդի որոշումը և համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

Արձանագրություն 12

2018թ. նոյեմբերի 10-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկ՝. ՀՄՖ դեկան Հ.Ղաջոյան)

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության հաշվետվության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների ներկայացում:

(զեկ՝. ՏՖ դեկան Ս.Ամիրխանյան)

3.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.- ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյանի զեկուցումը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների մասին: Նա ասաց, որ աշխատանքներն ընթացել են ուստարվա զարգացման հայեցակարգի դրույթներին և գործողությունների պլանին համապատասխան: Երկրորդ կիսամյակում իրականացվել են աշխատանքներ, որոնք մեծ մասով միտված են եղել ուսումնական տարին բարեհաջող ավարտելուն: Այնուհետև նա անդրադարձավ կիսամյակային քննությունների արդյունքներին: Ուսման առաջադիմության որակական ցուցանիշ է համարվել A և B միջակայքերի գնահատականների մեջ և ըստ հաշվարկների՝ նշված միջակայքերի գնահատականները կազմում են ընդհանուր գնահատականների 63,5 տոկոսը: Նշվեց համալսարանական «Լավագույն կուրս» և «Լավագույն ուսանող» մրցույթների, հանրապետական ուսանողական գիտաժողովներին ֆակուլտետի ուսանողների մասնակցության մասին:

Զեկուցողը ներկայացրեց նաև ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները: Քննությունների արդյունքներով առաջադիմությունը և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում առաջադիմությունը կազմել է 100 տոկոս: Քննական հանձնաժողովների նախագահների դիտարկումները քննարկվել են ֆակուլտետի խորհրդում, վերլուծվել են ուսման առաջադիմությանը և որակին խոչընդոտող հանգամանքները: Կատարվում է 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգի մշտադիտարկում և ինքնավերլուծություն: Ներկայացվեց նաև 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգին:

ԼՍԵՑԻՆ.- ՏՖ դեկան Ս.Ամիրխանյանի զեկուցումը ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի գործունեության, զարգացման հայեցակարգի կատարման ցուցանիշների և ինքնավերլուծության արդյունքների մասին: Նա ներկայացրեց կատարված աշխատանքները՝ նշելով, որ ուսուցման և դաստիարակության գործընթացի բարելավման հիմքում 2017-2018 ուստարվա հայեցակարգային պահանջների իրականացումն է: Ֆակուլտետում իրականացվել են համալիր միջոցառումներ կրթության որակի բարձրացման, ուսուցման և ուսումնառության արդյունավետության ապահովման ուղղությամբ: Մշտական քննարկման առարկա են դասավանդման ավանդական և նորագույն մեթոդների համադրման խնդիրները: Այնուհետև ներկայացվեցին ատեստավորման արդյունքներն ըստ բաժինների և կուրսերի՝ համեմատությամբ նախորդ ուստարվա արդյունքների, ցույց տալով շեղումները:

Բարեհաջող ընթացել են ամփոփիչ ատեստավորման քննությունները: Առարկայական հանձնաժողովները ներկայացրել են կրթության որակը բարձրացնելու վերաբերյալ առաջարկություններ, որոնց իրականացման ուղղությամբ կազմվել է գործողությունների ծրագիր:

Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ 2018-2019 ուստարվա զարգացման հայեցակարգին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Արձանագրություն 13

2018թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ԳՊՀ գիտխորհրդի նիստը: Նիստին գիտխորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2019 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

(զեկ՝. պրոռեկտոր Ն.Կուտուզյան)

2. ԳՊՀ 2017-2018 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվության և 2018-2019 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների ներկայացում:

(զեկ՝. պրոռեկտոր Ն.Կուտուզյան)

3.ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների 2018-2019 ուսումնական տարվա գործողությունների ծրագրի իրականացման ներկայացում:

(զեկ՝. դեկաններ)

ԼՍԵՑԻՆ.- Պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018 ուսումնական տարվա գործունեության և 2019 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի մասին: Նա ասաց, որ 2018 թ. ֆակուլտետում ուսուցումն ընթացել է 11 մասնագիտությունների գծով: Ներկայացվեցին ընդունելության կազմակերպման և քննությունների արդյունքում համալսարան ընդունված դիմորդների վերաբերյալ տվյալները: Դիմորդների համար տարբեր ձևաչափերով կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ՝ համալսարանական միջավայրին, ուսումնառության գործընթացին, կանոնակարգային փաստաթղթերին ծանոթացնելու նպատակով: Ներկայացվեց նաև ամփոփիչ ատեստավորման գործընթացը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի համար կրթական արդյունավետության ցուցանիշ է համարվում այն, որ 2018 ուսումնական տարում հանրապետության այլ բուհերից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել շուրջ 20 ուսանող, իսկ այլ բուհեր ԳՊՀ-ից տեղափոխվողներ չեն եղել:

Կարևորվեցին այն աշխատանքները, որոնք միտված են եղել կրթական ծրագրերի արդիականացմանը, ուսպլանների բեռնաթափմանը, առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների նորացմանը, կրթական ելքային արդյունքների վերանայմանը: Ուսումնական տարվա ընթացքում ուսանողները ցուցաբերել են հասարակական ակտիվություն. կազմակերպվել են միջոցառումներ, մրցույթներ: Առանձնապես ակտիվ է եղել «Վերնատուն» ակումբը:

Այնուհետև Ն.Կուտուզյանը ներկայացրեց 2019 ուստարվա զարգացման հայեցակարգը, որը բխում էր ԳՊՀ ռազմավարական ծրագրի դրույթներից:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Ն.Կուտուզյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2019 ուստարվա զարգացման հայեցակարգին:

ԼՍԵՑԻՆ.- Պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ 2017-2018 ուստարվա ուսումնագիտական գործունեության և 2018-2019 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Զեկուցողն ասաց, որ աշխատանքները համալսարանում իրականացվել են 2017-2018 ուստարվա համար հայտարարված «Նոր մոտեցումների և ակտիվ նախաձեռնությունների տարի» կարգախոսով՝ ուղենիշ ունենալով համալսարանի ինստիտուցիոնալ հավատագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների հաղթահարման և բարելավման ծրագիր-պլանը: Այնուհետև Ն.Կուտուզյանը ներկայացրեց տվյալներ առկա և հեռակա ուսուցման համակարգերում ուսանողական համակազմի համալրման, առաջադիմության, ամփոփիչ ատեստավորման գործընթացների վերաբերյալ նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ: Նշվեց, որ համալսարանում բավարարված են պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները. դասախոսների 51,5 տոկոսն ունի գիտական աստիճան: Վերանայվել և լրամշակվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքները, ակնկալվող ընդհանրական, մասնագիտական և գործնական իրազեկությունները: Առարկայական ծրագրերում ամրագրվել են գնահատման նկարագրիչներ, շարունակվում են աշխատանքները ըստ առանձին թեմաների վերջնարդյունքների ամրագրման ուղղությամբ: Փոփոխություններ են կատարվել ասպիրանտական ծրագրերում:

Աշխատանքներ են տարվել աշակերտների շրջանում մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ. համալսարան են այցելել դպրոցականներ, դպրոցներ են այցելել համալսարանականներ: Ներկայացվեցին դասախոսական անձնակազմի կողմից իրականացված հետազոտական աշխատանքները, նվաճումները:

Ն.Կուտուզյանը հանգամանորեն ներկայացրեց նաև ԳՊՀ 2018-2019 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները, որոնք մշակված էին ըստ ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի գերակա ուղղությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Ն.Կուտուզյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ 2018-2019 ուսումնական տարվա ԳՊՀ ուսումնագիտական զարգացման հիմնական ուղղությունների:

ԼՍԵՑԻՆ.-Դեկաններ Մ.Ավագյանի, Ս.Ամիրխանյանի, Հ.Ղաջոյանի, Թ.Ասոյանի զեկուցումները ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների 2018-2019 ուսումնական տարվա գործողությունների ծրագրի իրականացման մասին: Նրանք նշեցին, որ աշխատանքները իրականացվել են ֆակուլտետների զարգացման հայեցակարգերին համապատասխան: Կատարվել են գործողությունների պլանով նախատեսված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Դեկաններ Մ.Ավագյանի, Ս.Ամիրխանյանի, Հ.Ղաջոյանի, Թ.Ասոյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան